ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 50 ՏԱՐԻՆ

ՍՍՀՄ-Ը ԵՎ ԱԶԳԵՐԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Մ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր

Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը պատմության մեջ նմանը չունեցող ազգերի համերաշխ միություն է։

Անցյալում և այժմ սոցիալիստական սիստեմից դուրս ազգերի փոխհարաբերությունը դրսևորվել է որպես ուժեղի և թույլի, նվաճողի և ենթարկվողի հարաբերություն։ Սոցիալական հակասությունների արդյունք ազգային հակամարտությունը, ազգերի ոչ միայն իրավական, այլև փաստական՝ քաղաքական, տնտեսական ու մշակութային անհավասարության պահպանման հիմքն է։

Նրա վերացման ուղին բացահայտեցին Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը. «Միայն արթնացող պրոլետարիատը կարող է եղբայրություն հաստատել ազգերի միջև»[1]. «Ինչ չափով որ ոչնչացվելու է մի անհատի շահագործումը մյուսի կողմից, այն չափով էլ ոչնչացվելու է մի ազգի շահագործումը մյուսի կողմից։ Ազգերի ներսում եղած դասակարգերի անտագոնիզմի հետ միասին կվերանան նաև թշնամական հարաբերությունները ազգերի միջև...»[2]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը բազմաթիվ ժողովուրդների ազատություն և սոցիալիստական պետական ինքնուրույնություն բերեց։

Վ. Ի. Լենինը ապացուցեց, որ սովետական սոցիալիստական հանրապետությունների կամավոր միավորումը մեկ բազմազգ պետական միության մեջ սոցիալիզմի կառուցման և ազգերի իսկական՝ արդեն փաստական հավասարության հաստատման ամրակուռ երաշխիքն է. «Մենք ազգերի կամավոր միություն ենք ուզում,— գրում էր նա դեռևս 1919 թ.,— այնպիսի միություն, որը ոչ մի բռնություն չթույլատրեր մի ազգի կողմից մյուսի վրա, այնպիսի միություն, որը հիմնված լիներ ամենալրիվ վստահության վրա, եղբայրական միասնության պարզ գիտակցության վրա, լիովին կամավոր համաձայնության վրա»[3]։

Հենց այդպիսի միություն հանդիսացավ Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ և մեր երկրի բոլոր ազգերի աշխատավոր զանգվածների ամենայն աջակցությամբ 1922 թ. դեկտեմբերի 30-ին Սովետների համամիութենական I համագումարում հռչակված Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը՝ ՍՍՀՄ-ն։ Համագումարի ընդունած միութենական դաշնագրում նշվեցին անկախ սովետական հանրապետությունները դաշնակցային բազմազգ պետության մեջ միավորելու անհրաժեշտության երեք պատճառները. ժողովրդական տնտեսության վերականգնումն ու սոցիալիզմի կառուցումը, կա-

---

1 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Վ. Ի. Լենին, Պրոլետարական ինտերնացիոնալիզմի մասին, Երևան, 1960, էջ 33։

2 Նույն տեղում, էջ 44։

3 Նույն տեղում, էջ 577։

պիտալիստական շրջապատման պայմաններում երկրի պաշտպանության ամրապնդումը և սովետական իշխանության ինտերնացիոնալ բնույթը։

ՍՍՀՄ-ում ազգերի զարգացման ամենակարևոր արդյունքներից մեկը նրանց փաստական հավասարության հաստատումն է։ Դա նշանակում է, որ ՍՍՀՄ-ում այլևս չկան սոցիալ-քաղաքական, տնտեսական ու մշակութային առումով միմյանցից խիստ տարբերվող ազգեր, որ նրանք այժմ հասել են զարգացման միատեսակ բարձր աստիճանի։

Դրան հասնելու համար անհրաժեշտ էր, որ անցյալում թերզարգացած ու հետ մնացած ազգերի զարգացումը որոշակի ժամանակաշրջանում ընթանար ավելի արագ, քան արդեն բարձր աստիճանի հասած ազգերինը։

Ազգերի հավասարության կարևորագույն պայմաններից մեկը նրանց պետական-քաղաքական անկախությունն է, ազգային պետականության առկայությունը։ Կապիտալիզմի զարգացումն արդեն իսկ առաջադրեց ազգերի ինքնորոշման և ազգային պետությունների կազմավորման խնդիրը, սակայն, ըստ էության, նա ազգային պետական անկախություն ստեղծեց միայն կապիտալիստական զարգացման բարձր աստիճանի հասած մի քանի տասնյակ ազգերի համար՝ հարյուրավոր ազգերի դատապարտելով դարավոր գաղութային ստրկության և տանջալից ազգային-ազատագրական պայքարի։ Վերջին կես դարում մի քանի տասնյակ ազգեր ազատագրվեցին գաղութային լծից ու ձեռք բերեցին ազգային անկախություն։ Դա համաշխարհային սոցիալիստական համակարգի ամրապնդման և կապիտալիզմի համակարգի վրա նրա օրավուր աճող ազդեցության և այդ ժողովուրդների արյունալից ու մեծազոհ ազատագրական պայքարի արգասիքն է։ Այդ ճանապարհով անկախության հասան Եգիպտոսի, Սիրիայի, Սոմալիի, Նիգերիայի, Հնդկաստանի և Բանդլադեշի ժողովուրդները։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի շնորհիվ տասնյակ ազգեր սոցիալիստական հիմքի վրա վերականգնեցին անցյալում կորցրած իրենց պետականությունը (ուկրաինացիներ, վրացիներ, հայեր, լիտվացիներ, օսեր, թաթարներ և ուրիշներ), մի շարք ազգեր էլ իրենց պատմության մեջ առաջին անգամ ազգային պետականություն հաստատեցին (կոմիներ, մորդվաներ, չուվաշներ, բաշկիրներ, յակուտներ և ուրիշներ)։ ՍՍՀՄ կազմակերպումը հնարավորություն տվեց ոչ միայն ընդարձակել ազգային պետական միավորների քանակը՝ 1922 թ. 33-ից հասցնելով 53-ի, այլև անցած ժամանակաշրջանում բարձրացնել նրանց պետական ինքնուրույնության աստիճանը։ 1922 թ. չորսի փոխարեն այսօր 15 ազգեր են հանդես գալիս որպես միութենական դաշինքի ինքնիշխան մասնակիցներ, 14 ինքնավար հանրապետության փոխարեն այժմ կա 20-ը։

Այսպիսով, ազգերի ինքնորոշման սկզբունքի հետևողական կիրառման շնորհիվ այն բոլոր ազգերն ու ազգությունները, որոնց հիմնական զանգվածն ապրում է ՍՍՀՄ-ում, ունեն սոցիալիստական ազգային պետականություն՝ միութենական կամ ինքնավար հանրապետության, ինքնավար մարզի կամ ազգային օկրուգի ձևով։ Միութենական պետականության և ազգային պետականության անխզելի միասնությունն ապահովում է նրանց ոչ միայն համախմբումն ու գոյատևումը, կյանքի բոլոր կողմերի ամենալայն զարգացումը, այլև նրանց միջև սկզբունքորեն նոր, եղբայրական հարաբերությունների հաս-

տատումն ու ամրապնդումը, նրանց անշեղ մերձեցումը պրոլետարական ինտերնացիոնալիզմի հողի վրա։

Սոցիալիզմի թշնամիները, ճգնելով ապակողմնորոշել աշխարհի ժողովուրդներին և նրանց մեջ հակակրանք սերմանել ՍՍՀՄ նկատմամբ, կանգ չեն առնում ոչ մի կեղծիքի առաջ և հայտարարում են, թե, իբր, ՍՍՀՄ-ում ազգերը վերանում, ձուլվում են ռուս ազգի մեջ։ Այսպես, օրինակ, դաշնակցական գրականագետ Լ. Մկրտչյանը գրում է. «Խորհրդային կենտրոնական իշխանությունը պայքար, այն էլ կատաղի պայքար է մղում ոչ ռուս ազգերի գոյության դեմ»[4]։ Փաստերը հակառակն են վկայում։ Անցած հիսուն տարում ՍՍՀՄ ոչ ռուս ազգերը ոչ միայն շարունակել են գոյություն ունենալ, այլև աճել են ավելի արագ։ Այսպես, եթե 1926—1970 թթ. ՍՍՀՄ-ում ռուսների աճը կազմել է 165,7%, ապա վրացիներինը՝ 178,2, կիրգիզներինը՝ 190,3, բաշկիրներինը՝ 173,6, չեչեններինը՝ 192,1, օսերինը՝ 179,1, կաբարդացիներինը՝ 200, ինգուշներինը՝ 213,5, թաթարներինը՝ 203,3, տաջիկներինը՝ 218,2, թուրքմեններինը՝ 199,7, ուզբեկներինը՝ 240,6, ադրբեջանցիներինը՝ 256,6%։ Այդ նույն ժամանակաշրջանում ՍՍՀՄ-ում հայերի թիվը 1 մլն 568 հազարից հասել է 3 մլն 559 հազարի, այսինքն՝ աճը կազմել է 227%։

Այս պերճախոս փաստերը խեղաթյուրել ցանկացողներն, իհարկե, կարող են հայտարարել, թե ազգերի քանակական աճը դեռևս ոչինչ չի ասում նրանց բուն «ազգային» գոյության օգտին, քանի որ ազգությունը կարող է աճել, բայց միաժամանակ և ցրվել այլ ազգության շրջանակներում, ապակենտրոնանալ և, այդպիսով, կորցնել ազգային լեզուն ու մշակույթը, աստիճանաբար լուծվել մյուս ազգությունների մեջ։ Այդպիսին է, օրինակ, հայերի վիճակը ԱՄՆ-ում, ուր նրանց քանակը վերջին կես դարում թեև զգալիորեն աճել է, բայց նրանք սփռվել են տարբեր քաղաքներում՝ ոչ մի տեղ մեծամասնություն չկազմելով։ Դրա հետևանքով ամերիկահայության մեծ մասը (մասնավորապես երիտասարդությունը) արդեն չգիտե մայրենի լեզուն և աստիճանաբար դադարում է հայ լինելուց։

Մինչդեռ ՍՍՀՄ-ում տեղի ունի ոչ միայն ազգերի քանակական աճ, այլև աստիճանական համախմբում ու կենտրոնացում ազգային պետականության շրջանակներում։ Այդ են ցույց տալիս վերջին մարդահամարների տվյալները (տե՛ս աղյուսակ 1)։

Ինչպես երևում է բերված տվյալներից, միութենական բոլոր հանրապետություններում հիմնական ազգությունների քանակն ավելացել է զգալի չափերով և, միաժամանակ, որոշ բացառություններով, ավելացել է նաև ՍՍՀՄ-ում տվյալ ազգության ընդհանուր քանակից իր ազգային հանրապետության մեջ ապրողների տեսակարար կշիռը։

Այսպիսով, ակնհայտ է, որ Սովետական Միության կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականությունը, որը հենց ՍՍՀՄ կողմից տարվող պետական քաղաքականությունն է, հանգեցնում է ոչ թե «ոչ-ռուս» ազգերի ցրման, ուծացման ու անհետացման, այլ նրանց անշեղ աճին ու համախմբմանը։ ՍՍՀՄ գոյության կես դարը աներկբա ցույց է տալիս, որ ազգային և միջազգային սոցիալիստական պետականության այն զուգակցումը, որն իրականացվել է ՍՍՀՄ-ում, անսահման հնարավորություններ է ըս-

---

4 «Բագին», 1965, № 1, էջ 48։

տեղծում բոլոր ազգերի բուռն ու համաչափ զարգացման, հետամնացության հաղթահարման, նրանց ամենասերտ միավորման ու մերձեցման համար։

Ազգերի ինքնորոշման իրավունքի հիման վրա նրանց սոցիալիստական պետականության գոյությունը և միավորումը միութենական պետության մեջ այդ համակողմանի զարգացման կարևորագույն պայմաններից մեկն է։

ՍՍՀՄ գոյությունը հնարավորություն տվեց ոչ միայն միավորելու այդ հանրապետությունների նյութական միջոցները, այլև դրանց մի մասն օգտագործելու անցյալում ետ մնացած ազգությունների ավելի արագ զարգացման և, դրանով իսկ, առաջավորների մակարդակին հասցնելու համար։ Այդ նպա-

ՍՍՀՄ-ում տվյալ ազգության ընդհանուր քանակից ազգային հանրապետության մեջ ապրում է

Աղյուսակ 1[5]

Հանրապետություն	Ազգություն	Հազար մարդ		տոկոս	
		1959 թ.	1970 թ.	1959 թ.	1970 թ.
ՌՍՖՍՀ	ռուսներ	97864	107748	85,8	83,5
Ուկրաինական ՍՍՀ	ուկրաինացիներ	32158	35284	86,3	86,5
Բելոռուսական ՍՍՀ	բելոռուսներ	6532	7290	82,5	80,5
Ուզբեկական ՍՍՀ	ուզբեկներ	5038	7725	83,8	84,1
Ղազախական ՍՍՀ	ղազախներ	2787	4234	77,2	78,5
Վրացական ՍՍՀ	վրացիներ	2601	3131	96,6	96,6
Ադրբեջանական ՍՍՀ	ադրբեջանցիներ	2494	3777	84,9	86,2
Լիտվական ՍՍՀ	լիտվացիներ	2151	2507	92,5	94,0
Մոլդավական ՍՍՀ	մոլդավներ	1887	2304	85,2	85,4
Լատվիական ՍՍՀ	լատվիացիներ	1298	1342	92,7	93,1
Կիրգիզական ՍՍՀ	կիրգիզներ	837	1285	86,4	88,5
Տաջիկական ՍՍՀ	տաջիկներ	1051	1630	75,2	76,3
Հայկական ՍՍՀ	հայեր	1552	2208	55,7	62,0
Թուրքմենական ՍՍՀ	թուրքմեններ	924	1417	92,2	92,5
Էստոնական ՍՍՀ	էստոնացիներ	893	925	90,3	79,2

տակով հիմնականում օգտագործվել են հենց Սովետական Ռուսաստանի և Սովետական Ուկրաինայի միջոցները։ Այսպես, 1940—1970 թթ. ընթացքում արդյունաբերական արտադրանքի ծավալը ՌՍՖՍՀ-ում աճել է 10,6 անգամ, Ուկրաինական ՍՍՀ-ում՝ 8,3, Հայկական ՍՍՀ-ում՝ 21,3, Բելոռուսական ՍՍՀ-ում՝ 12,5, Ղազախական ՍՍՀ-ում՝ 18,7, Մոլդավական ՍՍՀ-ում՝ 24,9, Կիրգիզական ՍՍՀ-ում՝ 19, Էստոնական ՍՍՀ-ում՝ 27,8, Լատվիական ՍՍՀ-ում՝ 27,2, Լիտվական ՍՍՀ-ում՝ 31,1 անգամ[6]։

Սովետական հանրապետություններն այժմ բարձր զարգացած արդյունաբերական-ագրարային երկրներ են, որոնք իրենց արդի մակարդակով չեն զիջում բարձր զարգացած կապիտալիստական երկրներին, ունեն բազմաճյուղ արդյունաբերություն և ժամանակակից մեքենաներով զինված գյուղատնտեսություն։ Ըստ որում նրանցում լայն ծավալ է ստացել ոչ միայն քիմիական, թեթև ու սննդի արդյունաբերությունը, այլև մետաղաձուլական ու մեքենաշինական արտադրությունը։ Բելոռուսիան ծանրաքարշ ավտոմոբիլների ու տրակտորների, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների արտադրության նշանավոր

5 «Правда», 17. IV. 1971 (1970 թ. տոկոսային հաշվարկը մերն է—Մ. Մ.)։
6 «Народное хозяйство СССР в 1970 году», М., 1971, стр. 139.

կենտրոն է։ Սովետական Վրաստանը հռչակված է աշխարհում միակ թեյահավաք մեքենաների, Սովետական Հայաստանը՝ էլեկտրոնային հաշվիչ մեքենաների, մետաղահատ ճշգրիտ հաստոցների, էլեկտրոնային սարքերի, Սովետական Ադրբեջանը՝ նավթամշակման սարքավորումների, Սովետական Ուզբեկստանը՝ բամբակահավաք մեքենաների, Սովետական Լատվիան՝ ռադիոսարքավորումների արտադրությամբ։ Սովետական իշխանության տարիներին միայն Սովետական Հայաստանում գործարկվել է ավելի քան 680 արդյունաբերական ձեռնարկություն։

ՍՍՀՄ Միութենական հանրապետություններն, անշուշտ, չունեն մեկուսացած, իրարից խզված և իրար հակադրվող ազգային տնտեսություններ և հենց տնտեսության համամիութենական միավորման շնորհիվ է, որ նրանք հասել են վիթխարի նվաճումների՝ հաղթահարելով երբեմնի հետամնացությունը։

Սովետական ազգությունների քաղաքական և տնտեսական զարգացման ամենակարևոր հետևանքներից մեկը նրանց սոցիալ-դասակարգային կառուցվածքի արմատական փոփոխությունն է, որի մեջ հիմնականը շահագործող դասակարգերի ու խավերի մնացորդների լիակատար վերացումն է, բանվոր դասակարգի, գյուղացիության և մտավորականության սոցիալիստական վերափոխությունը։ Դրա հետ միասին կարևոր երևույթ է ազգային արդյունաբերական բանվոր դասակարգի և սոցիալիստական մտավորականության ձևավորումը այն ազգություններում, որոնք առաջ համարյա ամբողջությամբ կազմված էին գյուղական բնակչությունից (Միջին Ասիայի, Հյուսիսային Կովկասի ազգությունները)։ Դրա դրսևորումներից մեկը ՍՍՀՄ ազգերի քաղաքային բնակչության բուռն աճն է։ Այսպես, եթե 1971 թ. 1913 թ. համեմատությամբ ՌՍՖՍՀ քաղաքային բնակչությունն աճել է 5,2 անգամ, ապա Թուրքմենստանում՝ 9,1, Կիրգիզիայում՝ 10,7, Տաջիկստանում՝ 11,3, Ղազախստանում՝ 12,3, իսկ Հայաստանում՝ 14,7 անգամ[7]։

Սոցիալիզմի թշնամիները նույնիսկ նման փաստերին բացասական մեկնաբանություն են տալիս, հայտարարելով, որ ՍՍՀՄ-ում քաղաքների զարգացումով գյուղական մաքուր, թարմ կյանքը փոխվում է ապականված կյանքով և «կորչում է ազգությունը», որովհետև «գյուղացիությունը ազգի մը այն հաստատուն և պահպանողական տարրն է, որը երկյուղած բծախնդրությամբ կպահե և կպահպանե ազգային ավանդությունները, վսեմ և առաքինի բարքերը և հայրենատիրական ոգին»[8]։

Մեր դարաշրջանում, երբ գիտությունն ու մշակույթը թափանցել են կյանքի բոլոր բնագավառները, հասարակության բոլոր շերտերը, ազգության պահպանողը և որոշողն ավելի շատ խոշոր քաղաքներն են, իրենց կրթական-ուսումնական, գիտական, հրատարակչական և մշակութային խոշոր հաստատություններով։ Եվ դրա համար էլ ՍՍՀՄ-ում ազգությունների քաղաքական, տնտեսական և սոցիալական զարգացման նշված փաստերը հենց այն ամրակուռ հիմքն են, որի վրա խարսխվում և ծավալվում են նրանց ազգային լեզուները և ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական մշակույթը։

Ազգի կարևորագույն հատկանիշներից մեկը ազգային լեզուն է, որի գործածության շրջանակներն էլ հենց ազգի գոյատևման և զարգացման հիմնական

---

7 Տե՛ս «Народное хозяйство СССР в 1970 году», стр. 10.

8 «Հայրենիք» օրաթերթ (Բոստոն), 19. I. 1966։

չափանիշներից են։ Կապիտալիզմի պայմաններում, որպես կանոն, բազմազգ երկրում պետական լեզուն իշխող ազգի լեզուն է, որը գործածական է պետական-քաղաքական, տնտեսական, մշակութային-կրթական բնագավառներում, իսկ փոքր ազգերի կամ ազգային փոքրամասնությունների լեզուները պաշտոնական ոլորտներում ամենևին չեն գործածվում։

Ներմիութենական և միջազգային հարաբերությունների համար ՍՍՀՄ-ում գործածվում է ռուսաց լեզուն, որովհետև այն նպատակահարմար և ձեռնտու է բոլոր ազգերին։ Նրանք կամավորաբար ռուսաց լեզուն ընտրել են որպես ազգամիջյան հաղորդակցության և համագործակցության ընդհանուր լեզու, դարձրել իրար հետ փոխադարձ կապի և համախմբվածության լավագույն միջոցներից մեկը և նրա վիթխարի հնարավորությունների օգտագործման շնորհիվ ավելի լայնորեն են յուրացնում հայրենական և համաշխարհային մշակույթի լավագույն նվաճումները։

Դրա հետ միասին ՍՍՀՄ ազգերի ու ազգությունների լեզուները պաշտոնական պետական լեզուներն են նրանց ազգային պետականության շրջանակներում և գործածվում են քաղաքական, տնտեսական, մշակութային և կրթության բնագավառներում։ Նախկինում գիր ու գրականություն չունեցող ավելի քան 40 ազգություններ ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական օգնության շնորհիվ ձեռք բերեցին գիտականորեն մշակված գիր և այժմ ունեն զարգացած գրա-

Գրքերի հրատարակումը ՍՍՀՄ առանձին ժողովուրդների լեզուներով

Աղյուսակ 29

Լեզուներ	1913 թ.		1970 թ.	
	Գրքերի թիվը (տպ. միավոր)	Տպաքանակ (հազար օր.)	Գրքերի թիվը (տպ. միավոր)	Տպաքանակ (հազար օր.)
Ուկրաիներեն	228	686	3112	92800
Բելոռուսերեն	2	4	430	9371
Ուզբեկերեն	37	86	925	23208
Ղազախերեն	40	161	634	12807
Վրացերեն	232	453	1613	12963
Ադրբեջաներեն	91	112	850	8857
Լիտվերեն	194	669	1415	12019
Մոլդավերեն	չի եղել	չի եղել	550	6102
Լատվիերեն	1133	3796	1165	11870
Կիրգիզերեն	չի եղել	չի եղել	410	3322
Տաջիկերեն	5	15	377	4118
Հայերեն	257	349	822	7224
Թուրքմեներեն	չի եղել	չի եղել	308	3796
Էստոներեն	321	1103	1346	9290
Բաշկիրերեն	չի եղել	չի եղել	119	967
Բուրյաթերեն	չի եղել	չի եղել	48	225
Կաբարդերեն և Բալկարերեն	չի եղել	չի եղել	58	173
Կալմիկերեն	չի եղել	չի եղել	28	59
Մարիերեն	18	26	49	166
Մորդվայերեն	չի եղել	չի եղել	53	133
Ճակուտերեն	1	2	70	556
Չեչեներեն-Ինգուշերեն	չի եղել	չի եղել	49	155
Չուվաշերեն	56	93	94	942
Օսերեն	5	3	71	137

9 Տվյալները վերցված են. «Национальная политика ВКП (б) в цифрах», М, 1930, стр. 299, «Народное хозяйство СССР в 1970 году», стр. 679.

կան լեզուներ, մայրենի լեզվով հրատարակում են գրքեր, թերթեր և ամսագրեր։ ՍՍՀՄ-ում գրականություն է հրատարակվում 145 լեզուներով, այդ թվում՝ ՍՍՀՄ ժողովուրդների՝ 89 լեզուներով։ Ստորև բերվող աղյուսակները պատկերացում են տալիս ՍՍՀՄ ժողովուրդների լեզուներով գրականության աճի մասին։

Ազգային լեզուներով թերթերի և ամսագրերի հրատարակությունը ՍՍՀՄ-ում՝ 1950—1970 թթ.

Աղյուսակ 310

Հանրապետություններ և լեզուներ	Տարեկան տպաքանակը					
	Ամսագրեր (հազար օր.)			Թերթեր (միլիոն օր.)		
	1950	1970	Աճը 20 տարում (անգամ)	1950	1970	Աճը 20 տարում (անգամ)
ՌՍՖՍՀ-ռուսերեն	152430	2026665	13,3	4960	22402	4,7
ՈՒՍՍՀ-ուկրաիներեն	8216	167347	20,3	575	2346	4,2
ԲՍՍՀ-բելոռուսերեն	1117	20821	18,6	96	243	2,5
Ուզբ. ՍՍՀ-ուզբեկերեն	723	67153	91,5	59	493	8,3
ՂՍՍՀ-ղազախերեն	1033	18531	18,0	52	276	5,3
ՎՍՍՀ-վրացերեն	1324	13682	10,3	74	453	6,1
ԱՍՍՀ-ադրբեջաներեն	459	22531	49,0	36	295	8,2
Լիտ. ԱՍՀ-լիտվերեն	1490	32670	21,9	89	341	3,8
ՄՍՍՀ-մոլդավերեն	265	16324	61,6	28[9]	188	6,5
Լատ. ՍԱՀ-լատվիերեն	1400	35584	25,4	84	193	2,3
ԿՍՍՀ-կիրգիզերեն	253	17789	70,3	17	95	5,6
ՏՍՍՀ-տաջիկերեն	273	7514	27,5	19	106	5,6
ՀՍՍՀ-հայերեն	434	11503	26,5	26	177	6,8
ԹՍՍՀ-թուրքմեներեն	309	5695	18,4	21	88	4,2
ԷՍՍՀ-էստոներեն	1981	15860	8,0	74	182	2,4

Գրքերի, ամսագրերի և թերթերի հրատարակության այս վիթխարի աճը վկայում է ՍՍՀՄ-ում ազգային լեզուների աննախընթաց զարգացման և կյանքի բոլոր ոլորտներում նրանց գործածության ընդլայնման մասին։ Այդ մասին են վկայում նաև ՍՍՀՄ ազգությունների կրթական մակարդակում տեղի ունեցած փոփոխությունները։ ՍՍՀՄ կազմավորման պահին բազմաթիվ ազգություններ գրեթե անգրագետ էին, իսկ շատ ազգությունների լեզուներով ոչ մի կրթական հաստատություն չկար։ Այժմ ՍՍՀՄ բոլոր ժողովուրդները ոչ միայն լայնորեն ծավալել են մայրենի լեզվով միջնակարգ և բարձրագույն կրթություն, այլև իրենց կրթական աստիճանով համաշխարհային ամենաբարձր մակարդակին են հասել։ 1970 թ. ՍՍՀՄ ամբողջ բնակչության 48,3%-ը ուներ բարձրագույն և միջնակարգ (լրիվ և ոչ լրիվ) կրթություն, իսկ բնակչության 10.000 հոգուն ընկնող ուսանողների քանակով ՍՍՀՄ բոլոր հանրապետությունները, նույնիսկ 50 տարի առաջ ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն չունեցողները, այժմ գերազանցում են կապիտալիստական բարձր զարգացած երկրներին։ Այսպես, 1970—1971 ուստարում բնակչության 10.000 մարդուց բուհերի ուսանողների թիվը կազմում էր Թուրքմենստանում՝ 131, Տաջիկստանում՝ 149, Կիրգիզիայում՝ 158, Ադրբեջանում՝ 192, Վրաստանում՝ 189, Ուզբեկստանում՝

[10] «Народное хозяйство СССР в 1970 году», стр. 680—685.

189, Լիտվայում՝ 180, Հայաստանում՝ 214 հոգի[11]։ Մինչդեռ 1970 թ. Ճապոնիայում այն կազմում էր 125, Ֆրանսիայում՝ 96, Անգլիայում՝ 83, Իտալիայում՝ 78, ԳՖՀ-ում՝ 48, Թուրքիայում՝ 36, Իրանում՝ 15 հոգի[12]։

ՍՄԿԿ Լենինյան ազգային քաղաքականության մեծագույն նվաճումներից մեկը ՍՍՀՄ ժողովուրդների ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական մշակույթների զարգացումն ու նրանց փոխազդեցության ուժեղացումն է։ Գրականության, երաժշտության, նկարչության, ճարտարապետության, թատերական ու կինոարվեստի բնագավառում ՍՍՀՄ ժողովուրդների վիթխարի նվաճումները լայնորեն հայտնի են ամբողջ աշխարհում։ Դրա հետ միասին հատկապես պետք է նշել մշակույթի այնպիսի կարևոր ճյուղի զարգացումը, ինչպիսին գիտությունն է։ ՍՍՀՄ բոլոր հանրապետություններն այժմ ծածկված են գիտահետազոտական հիմնարկների խիտ ցանցով և հատկանշական է, որ մի 50 տարի առաջ նույնիսկ գիր ու գրականություն չունեցող կիրգիզ, թուրքմեն, բուրյաթ, յակուտ և այլ ազգությունների գիտնականները զեկուցումներով հանդես են գալիս միջազգային գիտական համաժողովներում՝ ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում և այլուր։

Առանց սովետական հանրապետությունների սերտ համագործակցության, ավելին՝ առանց միութենական մի ամբողջության մեջ նրանց միավորման, անհնարին կլիներ նրանց լեզուների, կրթության ու մշակույթի նման բուռն ու աննախընթաց զարգացումը։ ՍՍՀՄ նույնիսկ ամենափոքր հանրապետությունները կրթության ու մշակույթի զարգացման համար ի վիճակի են (համեմատական չափերով) ավելի շատ միջոցներ տրամադրել, քան ամենազարգացած կապիտալիստական երկրները, որովհետև նրանք օգտվում են ոչ միայն տեղական, այլև ընդհանուր-միութենական անսպառ միջոցներից։

ՍՍՀՄ 50-ամյա գոյության ամենահոյակապ նվաճումներից մեկը բոլոր ազգերի ու ազգությունների սոցիալական և բարոյա-քաղաքական միասնության ստեղծումն է։ Հաղթահարելով անցյալի քաղաքական, տնտեսական ու մշակութային անհավասարությունը, ապրելով շահագործումից ու ճնշումից ազատված, օրավուր կատարելագործվող սոցիալիստական դեմոկրատիայի պայմաններում, դաստիարակվելով ազգերի հավասարության, համերաշխության ու եղբայրության կոմունիստական սկզբունքներով, ՍՍՀՄ ազգությունների նոր սերունդները ձեռք բերեցին նոր քաղաքական ու բարոյական աշխարհըմբռնում, բոլորովին նոր հոգևոր կերպար, նոր՝ սոցիալիստական գիտակցություն, որի մեջ բնականորեն միավորվում են ազգայինն ու միջազգայինը։ Հենց դրա հիման վրա ՍՍՀՄ-ում ստեղծվել է մարդկանց բոլորովին նոր պատմական ընդհանրություն, որը կոչվում է սովետական բազմազգ ժողովուրդ։ Այդ բազմազգ և, միաժամանակ, միասնական ժողովրդի բնորոշ գծերը, ինչպես հստակ նշված են «Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորման 50-ամյակի նախապատրաստության մասին» ՍՄԿԿ Կենտկոմի որոշման մեջ, նվիրվածությունն է կոմունիզմի գործին, սոցիալիստական հայրենասիրությունն ու ինտերնացիոնալիզմը, աշխատանքային ու հասարակական-քաղաքական բարձր ակտիվությունը, անհաշտությունը շա-

11 Նույն տեղում, էջ 643։

12 Նույն տեղում, էջ 119։

հագործման ու ճնշման նկատմամբ, ազգային ու ռասայական նախապաշարումների նկատմամբ, դասակարգային համերաշխությունը բոլոր երկրների աշխատավորության հետ[13]։

ՍՄԿԿ XXIV համագումարի պատմական կանխագծումներով ոգեշնչված՝ սովետական ազգերն ու ազգությունները վստահորեն քայլում են կոմունիստական շինարարության նոր, հոյակապ առաջընթացի ուղիով։ Նրանք լի են վճռականությամբ ավելի ևս ամրապնդել իրենց եղբայրական դաշինքը խորհրդանշող, իրենց բուռն ծաղկումն ու մերձեցումն ապահովող Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը։

СССР И ДОСТИЖЕНИЕ ФАКТИЧЕСКОГО РАВЕНСТВА НАЦИЙ

М. А. МЕЛИКЯН
Доктор философских наук

Резюме

На основе данных всесоюзных переписей населения и статистики, демонстрирующих рост численности наций, многоотраслевое развитие экономики союзных республик, расширение сфер действия национальных языков, бурный расцвет национальных культур за 50 лет существования СССР, показывается как, благодаря осуществлению ленинской национальной политики КПСС, в нашей стране преодолено былое неравенство наций и национальностей, достигнут их одинаково высокий уровень развития и осуществлено сплочение всех наций в единый советский народ, характеризующийся преданностью делу коммунизма, сочетанием социалистического патриотизма и интернационализма, высокой трудовой и политической активностью непримиримостью к эксплуатации и подавлению народов и классовой солидарностью с трудящимся всех стран.

В связи с этим раскрывается несостоятельность измышлений идеологов буржуазии, в частности, деятелей националистической партии дашнакцутюн, о подавлении и ассимиляции наций в СССР.

СССР—нерушимый союз социалистических наций, возглавляющий прогресс человечества.

---

13 *Տե՛ս «Սովետական Հայաստան», 22. II. 1970։*